ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Բուսական հումքից կարելի է արտադրել հեղուկ վառելիք, որն ավելի հեշտ է տեղափոխել և օգտագործել ավանդական սարքերում ու սարքավորումներում: Յուղ պարունակող բույսերից կարելի է արտադրել դիզելային վառելիք: Շաքար և օսլա պարունակող բույսերից կարելի է ստանալ սպիրտ, որը նույնպես օգտագործվում է որպես վառելիք (կենսաէթանոլ):

Բրազիլիան շաքարեղեգից բիոէթանոլ արտադրող և օգտագործող առաջատար երկրներից է: Ներկա դրությամբ էթիլ սպիրտը բավարարում է երկրի ավտոմոբիլային վառելիքի 18%-ի պահանջարկը (նկ. 14ա, բ):

Նկ. 14, ա. Կենսաէթանոլի արտադրության գործարան Բրազիլիայում

բ. Բրազիլիայի ավտոլցակայաններում մեքենան կարելի է լիցքավորել կենսավառելիքով